229

1. Կյանքս ըլլա, Տե՛ր, սաղմոս ու երգ,
Առողջություն տաս, կամ խոր վերք,
Բաժինս ըլլա սուգ ու թախիծ,
Ձախորդություն կամ սուր կսկիծ,
Նույնիսկ ոսկիս դարձնես պղինձ,
Կամ ցնցոտի հագցնես ինձ,
Պիտի երգեմ ու գովեմ Քեզ
Դառն վշտերուս մեջ հրակեզ:

2. Դուն երկնքեն կուտաս արև,
Կուտաս նաև ամպեր սև-սև,
Ծուքեր ունի օրս խաղաղ,
Ինչպես փուշեր՝ վարդը չքնաղ:
Բայց ինձ հասնող ամեն չարիք
Իր մեջ ունի հազար բարիք,
Եվ արցունքի բաժակս դառն
Կքաղցրանա սիրովդ վառ:

3. Տե՛ր, զիս օրհնես կամ զիս պատժես՝
Պատժող ձեռքդ համբուրեմ ես,
Զի հայրական մատներդ գթոտ
Կփաթաթեն վերքն իմ կսկծոտ:
Գիշերվան մեջ կուտաս ինձ երգ
Ու կվառես ճրագս հեգ,
Ես ալ, ո՛վ Տեր, երեսընկած
Կհամբուրեմ ձեռքդ օրհնյալ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025